ՄԱՀՈՒԱՆ ՄՕՏ…

Մեռնիլ մահով մ'ու զայն ըզգալ չունչիդ դէմ,
Մըտածումով զայն ճանչնալ,
Ըսել — Ո՛վ մահ, ո՛վ այցելու դալկադէմ,
Ցօժարակամ քո՛ւկդ եմ ալ։

Ա՜հ, թող լըռե՛ն մեղեդիներն՝ որոնց խոր
Ճամբորդեցի տեսլահար,
Ու թող փլչի՛ն իղձերն որոնք ամէն օր
Կոթողուեցան ղերդ կամար։

Ա՛լ թող հոսին աննիւթական ջուրի պէս
Բոլո՛ր իղձերն օրերուս,
Սիրոյ մորմոքն անհետանա՛յ թող այլեւս
Որ կաչկանդեց սիրտս անյոյս։

Հէդ մանկութեանս սեւ ուղիներն աքսորի
Թող ա՛լ ջնջուին աչքերէս…
Կարօտն անբաւ որ միշտ պահեց զիս դերի
Ցուշերու մէջ սիրակէզ։

Ու մանաւա՛նդ տունի մ'ըստուերն երջանիկ
Որ մանկութիւնս օրօրեց,
Որ կը տանջէ դեռ իմ աչքերս հիացիկ՝
Իր դիւթանքի դըրան յեց…։

Անցեալս աւեր, երազներուս չաղախով
Կերտեր էի վերըստին,
Ուր ամէն ինչ դաշն էր, վըսեմ, հոգեթով,
Մտքիս կեանքով թրթռադին…։

Հո՛ն էր նաեւ աննիւթ դամբանն իմ բոլոր
Մեռելներուս նահատակ,
Ուր ամէն օր պաշտամունքով խնկածոր,
Կարօտներով անպարփակ՝

Կ'իջնէի ես անոնց անե՛ղր լըռութեան
Եւ հեզութեան մէջ գաղտնի՝
Հաղորդուելու, եւ ներշնչման դիւթական՝
Քաղել ծաղիկը ոսկի…։

Հո՛ն զինեցի միտքս, աչքերս ի՛բըր փարոս՝
Զարիքին դէմ ահռելի
Որ աւերեց վատ բընազդով բարբարոս
Կեանքի հունն իմ ծաղկալի։

Աչքերս որոնք լեցուն էին երազով՝
Զանազանել չըգիտցան
Ո՞ւր կը սկըսէր սիրոյ սահմանը — ջի՜նջ ծով —
Եւ ոխը ո՞ւր մարդասպան…։

Եւ թէ ինչո՞ւ հարկ էր յուզուի՛լ շարունակ
Ի տես չիջող արեւին
Եւ յամրօրէն անջատել կամք ու ակնարկ
Կեանքի լոյսէն ջերմագին…։

Ընտելանա՛լ քու ըստուերիդ ահաւոր,
Ո՛վ մահ, ահե՛ղ ըսփոփիչ…
Ճաշակելէ վերջ ապրումին ա՛յսքան խոր
Անմահական յո՛յզն անջինջ…։

Բայց եկո՛ւր ա՛լ, ու թող դադրի մարտընչումն
Ընդմէջ մարմնոյս, երազիս.
Վերցո՛ւր կուրծքէս անձկութեան լուծն անպատում,
Խաղաղութե՛ան կանչէ զիս…։

ՄԱՌԻ ԱԹՄԱՃԵԱՆ

Փարիզ, 18 Յունուար 1956